յիլ մի : Օ զաթըլ էքպէր ումուճ գաթօլիք

մէզհէպինէ թապի հիսապըղ ճէմաաթլարըրի-
տարէ էթմէյէ մուվաֆազ օլտուլը հալտէ՝ պի-
ղէ կէլինճէ՞մի արթըգ շաչըրըպ՝ պիղի եանչը
եօլա սէվպ իտիյօր վէ վաղիֆէսինտէ խէթա
իտիյօր : Իմտի պաշգա չարէ եօգ, օ մէգալէի
գալէմէ ալան քէրամէթ սահիպի զաթըլ շէ-
րիֆ կիթսին Բաբա հաղրէթլէրինին միւլա-
վիլլիլինի տէրէօհէտէ էթսին քի՝ քիլիսէի
չէրիֆին կէմիսինի չաղգանան տալկալարըն
տարպէլէրինէ գարչը մուհաֆաղա էթսին : վէ
եախօտ քէնտիլէր կիպի տիւշիւնէն պիր Բա-
բա պուլուսամատըգճա քէնտիլէր իթաաթ էթ-
մէյէճէքլէր : պու տա եէնի չըգմա մօսա պիր
իթաաթ տըր, լաքին գօրգարըմ քի պուսու
տա թէճրիւպէ էթմէք ֆուրսաթընը իլէլէպէտ
էլէ տիւշիւրէմէսինլէր, գաթօլիք քիլիսէսի-
նին էօյլէ հէր ըիւղկեարա տէօնմէտիկինի
Մեհմուայի Ախպար տա բէք էյի պիլիբ վէ
վաղթըլըլա գաչ տէֆալար պու մէպտէի քէն-
տիսի տէ պիղզաթ մուհաֆաղա էթմիլ իտի,
հէյհաթ...

Հիւքիւմէթը Օսմանիյէնին գարարընա կէ-
լինճէ, պիլիսիյիմիզէ կէօրէ օլ գասուր Րիւթ-
պէթլու Թերզեան էֆէնտինին հիւքիւմէթէ
գարչը խէթալար էթմիլ օլտուղու իչին վե-
րիլմէտի, իլլա ճէօմաաթըն պիր քիւշիւք
զըմընըն իսթէմէտիկի իչին պիր թագըմ ար-
պէտալար վէ հապէճա մուամէլէլէրին էօնիւ-
նիւ ալմագ մագսատըլա իտի քի, օ ճէօմա-
աթ նամը իլէ իլէրույէ սիւրիւքլէնէյլէրին
քիմէր օլտուղու, վէ հաղըգաթէն օնլարըն
պու միլլէթի խարապ էթտիյի պագըլ նիւմա-
յիլլէրին հիւքիւմէթճէ օլան թէտղիգաթլա-
րընտան պիլէ, ախիւրէն անլաչըլտը, վէ է-
մինիզ քի հիւքիւմէթի օսմանիյէ պու մէսէ-
լէնին պիղիմ մէզհէպիմիզին նիզամլարընա
կէօրէ խիթամ պուլտուղուկէ օրտիլի կիւն-
տէ, Րիւթպէթլու Կաթողիկոս էֆէնտիմիզին
վաղիֆէսինտէ տէվամ էթմէսինէ ասլա պիր
միւլաքիլաթ վէ միւմանաաթ չըգարմայաճազ
տըր :

ՍՍՏԵՏԻԼ ՊԻՐ ԳԱԹՕԼԻԶ

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՏՕՆԱՅՈՅՑ

- Հոկտեմբեր 5 † Գիր. ԳՃ. Դ. զկնի Խաչին
6 Բշ. ԳԿ. Փոկասու Հայրապետին եւ
Երանոսի հետեւողի Առաքե-
լոցն:
7 Դշ. ԴՃ. Ս. Կոստանացն Թեկդի եւ
Վառվառեայ
8 Դշ. ԴԿ. Պահոց:
9 Եշ. աճ. Պանգալեոնի բժեկին եւ Եր-
մոդեայ Բիյին եւ Եւպրա-
սեայ կուսին:
10 Ուրբ. աԿ. Պահոց
11 Եր. ԴՃ. Կալիստոսոսի եւ Բառա-
սուն եւ ինն վկայիցն եւ
Ղուկկիանոսի Բահանային:

ՍՈՒՐԻ ԱԼՓՈՆՍՈՍ ԼԻԳՈՒՄԻՆԻ

Տօնք՝ 2 Փգոսոսոս

(Շաբ. եւ վերջ)

Սուրբ-Ագաթայի եպիսկոպոսութիւն ըրած ամ-
բող ժամանակամիջոցին՝ շատ հիւանդութիւն կրեց,
երեք անգամ յետին աստիճանի տկարութեան մէջ
ինկաւ. բայց ետ չկեցաւ իր վիճակին ամբողջ պարտ-
քերը կատարելէ եւ իր Թեմին ամէն պէտքերը հո-
գալէ: Իր անխնայ եւանդէն ստիպուած՝ իննօրեայի մը
առնէն, որ օգոստոս ամսուն տեղի կ'ունենար, ամէն օր
քարոզեց՝ երաշտութեան ժամանակ անձրեւ ընդու-
նելու համար: Այս քարոզները, որ տուաւ երկար
հիւանդութենէ մը յետոյ, եղանակին շտաբը, եւ իր
բնական տկարութիւնը պատճառեցին ընդհանուր
յօգացաւորութիւն մը, որ իր բոլոր անգամերուն շար-
ժումը խեղեց եւ այնպէս կորացուց իր գլուխը. որ այլ
եւս չկրցաւ պատարագ զուրցել կամ հանգիստ պառ-
կել: Այսպէս ապրեցաւ իր կենաց վերջին 17 տարի-
ները:

Շատոնց կը փափաքէր հրաժարել եպիսկոպոսա-
կան պաշտօնէն, զոր ընդունած էր հնազանդութենէ
ստիպուած: Այս մասին գիմեց Կղեմէս ԺԴ-ին. բայց
Քահանայապետը պատասխանեց թէ՝ Քու անունդ
միայն բաւական է թեմիդ լաւ կառավարութեան
համար: Այս մասին գիմեց նաեւ յաջորդ Քահանա-
յապետին Կղեմէս ԺԴ-ին, որ իրեն պատասխանեց.
«Թեմիդ համար, մահճիդ մէջ ըրած մէկ աղօթքդ՝
հոգեւական հազար այցելութիւններէ աւելի արժէք
ունի Աստուծոյ առջեւ»: Ուստի շարունակեց իր
պաշտօնը սպասելով, ինչպէս ինքը կ'ըսէր, նոր Քա-
հանայապետի մը գահակալութեան — Երկու օր
կեցաւ առանց ուտելու, առանց խօսելու: Իր ծա-
ռաները այս բանէն տաքնապի մտնուած՝ քովը վա-
զեցին եւ հարցունքն ինչ ունենալը. Զէ՛ք գիտե՛ք, պա-

տասխանեց, որ կ'ընկերանայի յուղարկաւորեան
Կղեմէս ԺԴ-ին, որ մեռաւ: Մի քանի օր վերջը հաս-
կըցուեցաւ թէ Կղեմէս ԺԴ. մեռած է ճիշդ Ալփոն-
սոսի ըսած ժաման: Պիտ Զ. Ին ընտրութիւնը լսելուն
պէս խնարհութեամբ լի նամակ մը գրեց անոր: Մի
քանի օր վերջը նպատաւոր պատասխան մը առաւ:
Սուրբ այս պատասխանը առնելուն պէս գոչեց.
Օրհնեա՛լ ըլլայ Աստուած, որովհետեւ ուսերուս վրայէն
լեռ մը վերցուց: 1775ին թեմին գործերը կարգադրեց
եւ քաշուեցաւ իր Կարգին Ս. Միքայէլ վանքը:

Հոն ապրեցաւ իբրեւ հասարակ եղբայր մը. եւ իր
հիւանդութեան ներածին չափ Կարգին կանոնադրին
հետեւեցաւ: Հակառակ իր տկարութեան ամէն շա-
բաթ եւ կիրակի օրերը Սուրբ-Միքայէլի եկեղեցւոյն
մէջ եւ մօտաւոր տեղերը կը քարոզէր: Ընկերոջ հոգ-
ւոր փրկութեան նկատմամբ միշտ մեծ եւանդով
բռնկած գրեց շատ հոգեւոր գիրքեր:

Պատարագելու անկարող ըլլալէն յետոյ ամէն օր
առտու հաղորդութիւն կ'առնուր մինչեւ մահը: Տա-
պանակի Յիսուսին սիրովը բոլոր քուստ գրեց իր Ամե-
նասուրբ Խորհուրդին այցելութիւնները:

Երբ հիւանդութիւնը կը սաստկանար, իր ինչ-
պէս ըլլալը հարցնողներուն կը պատասխանէր. Մահը
մօտէն կը հետապնդէ զիս. բայց ես Աստուած միայն
կ'ուզեմ, Աստուած միայն, Աստուած միայն:

Աստուածածնի ունեցած ջերմեւանդութիւնը
արտաքոյ կարգի էր: Զանկիայ իր Կարգին պաշտպան
դրաւ եւ քարոզեց թէ՝ անոր բարեխօսութիւնը ամե-
նամեծ միջոց մըն է Աստուծոյ շնորհք ընդունելու:

Իբրեւ ապացոյց իր խրին յարգանքին՝ նկատ-
մամբ Ս. Քահանայապետին. Եկեղեցւոյ տեսանելի
Գլխին, Յիսուսի երկրիս վրայի Փոխանորդին, յիշատա-
կութեան արժանի է Փերրոնիոսի գէմ գրած գիրքը,
զոր յօրինեց այս հեղինակին յանձնարարական գաղափար-
ները հերքելու համար: Նոյն նպատակով ուրիշ երկու
լատիներէն երկասիրութիւն ալ գրեց. առաջինը՝ Քա-
հանայապետին հաւատքի եւ բարքի վերաբերեալ վե-
ճիւններու մէջ անխալ ըլլալուն վրայ. երկրորդը՝
Քահանայապետին ընդհանուր եւ ուրիշ ժողովներու
վրայ ունեցած գերիշխանութիւնը հաստատելու հա-
մար: Պատասխան եմ կ'ընէ իր մէկ նամակին մէջ, պատ-
ասխան եմ Քահանայապետին գերիշխանութիւնը պատ-
կանելու համար արիւն քափելու. որովհետեւ եթէ վեր-
ցուի այս առանձնաւնորոշութիւնը, Եկեղեցին կ'ոչնչա-
նայ: Առանց այս գերագոյն դասաւորին, կ'ըսէ ուրիշ
առթիւ մը, առանց այս վեճերը վերջնականօրէն լու-
ծող գերագոյն դասաւորին, հաւատք կը փնտրուի:

Սուրբ մահուամբ մը կնքեց այս պատկառելի
ծերը իր աշխատալի եւ վշտալի կեանքը 1787ին,
օգոստոս 4ին, չորեքշաբթի օրը, 90 տարուան տառը
ամուսնու եւ հինգ օրուան: 1790ին Պիտ Զ. զինքը
յարգելի հրատարակեց, Պիտ Է. երանաչափ զինքը
Վերջապէս 1830ին Պիտ Ը. կնքեց իր սրբազան
վճիռը, զոր գործադրեց Կրիզոթ ԺՂ:

ՀՈՂԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ
„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ” ԳՐԲԷՆ

Գիրք Ա. — Գլ. ԺԳ. — Փորձութիւններու դէմ կեանքու վրայ:

Փորձութեանց ու նեղութեանց մէջ կը փորձուի մարդ, քի ո՛րչափ յառաջդիմած է ի կատարելութեան. ասոր մէջ կը կայանայ մեծագոյն արդիւնք, եւ առաջինութիւնը շա՛ւ եւս կը յայտնուի:

Մեծ քան մը չէ՝ քի մարդ ջերմեռանդ ըլլայ եւ հոգեյից, երբ նեղութիւն մը չի զգար. բայց երբ հակառակութեանց ու վշտաց ասեւն հանդիմութեանք կը յարստեւէ, կրնայ յուսայ մեծ յառաջդիմութիւն:

Ունակ մեծ փորձութիւններէն իրենք զիրենք կը պահպանեն, եւ ամենօրեայ քերէւ փորձութիւններու մէջ ո՞նք կը յաղորդին, որպէս զի խոնարհին եւ մեծերուն մէջ քնաւ իրենք իրենց չի վստահին, քանի որ ա՛յնքան պզտիկ քաներու մէջ կը սկստանան:

ՍՈՒՐԲ ՍԻՐՏ ԵՐԱՌԻՍԻ

(Շար.)

ԳԼՈՒԽ Գ.

Գործնական ջերմեռանդութիւն առ Ս. Սիրուն

Հ. Այս ջերմեռանդութիւնը գործնական-նապէս ի՞նչ կը պահանջէ:

Պ. Երկու բան. ամէն ճիգ ընել զՏէրն մեր ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ սիրելու եւ ցոյց տալու որ կը սիրենք զինքը:

Հ. Հա՛րկ է որ այս սէրը զգալի ըլլայ:

Պ. Ո՛չ. անպատճառ պէտք չկայ խանդաղատական ու զգայական սիրոյ, որ շատ անգամ մեր կարողութեան մէջ չէ. այլ համարումի ու նախադասութեան սէր մըն է կարեւորը, որ գործերով ի յայտ կու գայ:

Հ. Որո՞նք են այդ գործերը:

Պ. Իւրաքանչիւր ոք՝ ըստ իւր միտութեան, կրնայ ընտրել՝ բարեպաշտութեան, ազաշխարհութեան, եղբայրսիրութեան ու Աստուծոյ փառաց ու հոգւոց փրկութեան եւ ուսման գործերուն մէջէն իրեն համար գործադրութիւնը կարելի եղածները:

Յօդ. Ա. Գործք բարեպաշտութեան

Հ. Որո՞նք են այն բարեպաշտութեան գործերը որոնք կրնան պատուել Ս. Սիրունը:

Պ. Ս. Սրտի պատկերը կրել իր վրայ, կախել իր տան մէջ, զարդարել, ջերմեռան-

դութեամբ համբուրել. — Ս. Սրտին երկրպագել. շնորհակալ ըլլալ, այցելել Անոր՝ Գոհութեան Խորհուրդին մէջ. — պատարագ տեսնել՝ յորում նա կը նորոգէ իր սղջակէզ զենուածը. — մասնակից ըլլալ իր չարչարանքներուն՝ ձախապարհ խաչի ջերմեռանդութիւնը ի գործ դնելով. — ինքզինքը Անոր ընծայել, Անոր հատուցում ընել մեր գործած կամ ուրիշներէն դործուած մեղքերուն համար. — ընկեր գրուիլ ԱՂՕԹՔԻ ԱՌԱՔԵՆԼՈՒԹԵԱՆ, Յիսուսի հոգեւոր Սրտին ընկերութեան, Պատուաբիր Պահնորդութեան, Ս. Սրտի մէկ եղբայրութեան. — ստէպ Անոր միանալ՝ սլացական աղօթքներով, Ս. Հաղորդութեամբ կամ հոգեւորական հաղորդութեամբ ու մանաւանդ ամսոյն առաջին ուրբաթ օրը Ս. Սեղանին մերձենալ:

(Շարունակելի)

ԱՄԱՍԻԱՅԷՆ

Օգոստոս 31ին կիրակի օրը թաթառ մը իջաւ մեր քաղքին մօտերը եւ արեւմուտքէն արեւելք յառաջանալով պատճառեց անհնարին աղէտներ որոնց եթէ ականատես ալանջաւոր չըլլայինք, չպիտի կարենայինք հաւատալ:

Անձրեւը 4¹/₂ին սկսաւ եւ միայն կէս ժամ տեւեց, բայց Զիարէ գիւղին փոքրիկ առուէն իսկոյն յորգեց, ահաւոր հեղեղ մը դարձաւ, չըջակայ ծառերը ծածկեց եւ անոնցմէ երեք կանգունի չափ վեր բարձրացաւ, ինչպէս փորձով հաստատեց տեղւոյս նահանգապետը: Նոյն գիւղին մօտ այգիներ այնպէս արմատախիլ եղեր անհետացեր են որ տեղերնին իսկ կարելի չէ գտնել: Հսկայ ընկուզենիներ նոյնպէս աներեւոյթ եղեր են: մարդ չի գիտեր ո՛ւր տարուած կամ թաղուած են: Այս ամէնը, կ'ըսէ ականատես մը, ա՛յնքան արագօրէն տեղի ունեցաւ որ մարդիկ իրենք իրենց անդրադառնալու ժամանակ իսկ չունեցան. եւ գիւղը ամբողջ կորստեան կը մասնուէր եթէ ջուրը քառորդ մըն ալ չարունակէր բարձրանալ: Կարեւոր ալ մը, որ

գիւղին լուացավայրին և մեծ աւազանին ջուր կը մատակարարէր, այնպէս անհետացեր է որ երկրաչափները չկրցան նորէն գտնել: Աւելաւն 13 օր վերջը աս ակին բղխած տեղը և յաջորդ փորելով, գտնուեցան կարկտահատեր և բերուեցան մէկ ու կէս ժամուան տեղ՝ մինչև քաղաք: Նոյն ատեն զանոնք տեսնողներէն մէկը ինծի ըսաւ թէ՝ բթամատի առաջին սակրին չափ կային: Թաթառին իջած միջոցին կ'ըսուի թէ հաւկթաչափ կարկուտներ տեղացեր են:

Այս գիւղին վնասը 50000 օսմանեան ոսկի կը համարուի:

Ձորամէջին առաջնակարգ ջրաղացին ոչ միայն պետնայարկերը այլ նոյն իսկ վերի յարկերը աւազով լեցուած են: Այս ջրաղացին մէջ չորս ձի խղզուած են:

Կէօլլիւի մէջ որ քաղքէն կէս ժամ անդին է, վեց լոժոժարան ջուրերէն տարուած են և շատ այգիներ խճերու տակ թաղուած են: Երկայարկ տուն մը, տեղէն միակտուր հանուեր մէջերով վար քշուեր է, և մինչև երկրորդ գետիկմը աւազով լեցուեր է:

Աղբային ուղին 121 և 127 հազարամէդրերուն մէջ տեղը, հեղեղի մը յատակին կերպարանքը առած էր՝ աղէտին երկրորդ օրը: հոս երկայն, տղմախառն ջրակոյտեր, հոն աւազի և քարի շեղջեր, ամէն կողմ ցանգիւրու, պատերու բեկորներ հիւր ու ցան: Ակ մը, ուր տփորաբար ձիերուն ջուր կը տրուէր, 200 մէյր խոր յատակէ մը սկսեր է հոսիլ:

Աղէտին վնասները սոսկ նիւթական չեն, կը խօսուի արդէն թէ՝ 11 հոգի զոհ պացեր են: Կին մը, որուն տունը ջուրէն քշուեր տարուեր է, ստիպուած է գիրկին տղան թողուլ հոտանքին բռնութեան, և ինքզինքը չէ կրցեր ազատել եթէ ոչ փաթթուելով ծառի մը ճիւղերուն որ բարեբախտաբար հաստատուն մնացեր է:

Երիտասարդ մը իր էջը ազատելու ջանացած ատեն խճերու տակ թաղուեր է գիակը գտնուեցաւ խճերէն գուրս ցցուած մէկ ձեռքէն: Իսկ էջը, որ գլուխը քարերէն գուրս բռնել կրցեր էր, ողջ ողջ գուրս հանուեցաւ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ռ Մ Ե Ի Կ Ա Ք Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Պիոս Ժ. Սրբապետ Քահանայապետը՝ Իտալիոյ երկրպագու քահանայից համաժողովին մասնակցող բազմաթիւ եպիսկոպոսները ունկնդրութեան ընդունելով զանոնք քաջակերեց և խրատուեց որ իրենց բովանդակ ուժերով ջանան ծաւալելու Ս. Խորհուրդին ջերմեռանդութիւնը: «Աս է, ըսաւ անոնց, ամենէն վսեմ ջերմեռանդութիւնը, որով հետեւ ասով մարդս ուղղակի Աստուծոյ կ'երկրպագէ. աս է նորիպէս ամենէն շահեկանը, որով հետեւ անով կը միացուի Հորհաց աղբիւրին հետ. աս է ամենէն հեշտականը, որով հետեւ հաղորդուողը կրնայ ըսել իւրովի. Սիրելի իմ ինձ, եւ ես նմա. իմ սիրականս ինծի և ես իրեն: Ուստի աս առաջնակարգ ջերմեռանդութեան վրայ որչափ ալ ծանրանաք քիչ է: Յանձնարարեցէ՛ք յաճախ հաղորդութիւնը, Ս. Սեղանին մօտ կանչեցէ՛ք փոքր տղաները:»

Պեր. Կարնիէի առաջնորդութեամբ Հռոմ գացող Պրանասցի ուխտաւորները, Իտալացի և օտար հազարաւոր ուխտաւորներու հետ ընդունուեցան Ս. Դամասոսի բակին մէջ:

Պրանասցի ուխտաւորները Լուրտի Ողջոյն Բեզ Մարիամը երգեցին պատկառազօր ներդաշնակութեամբ: Քահանայապետը պատշգամբ եկաւ՝ Գոստէթա կարդինալին հետ և հնչուն ձայնով իր օրհնութիւնը տուաւ:

Իտալացի կաթողիկէ Տիկիններու Միութեան Նախագահուհին՝ Ս. Հօր ուղղից հետեւեալ սրաւբուռ և ազնիւ զգացումներով իր հեռագիրը:

«Ն. Սրբութիւն Պիոս Ժ.— Հռոմ

Այսօր Իտալիոյ կաթողիկէ Տիկիններու Միութիւնը ուժգին բողբջելով ընդդէմ այն ինքնատաց և յստիքատացող ապատականներուն, որոնք կաթողիկէ Գերագոյն Աթոռին Պետին յարգանք և մեծարանք ընծայելու համար Հռոմ եկող իտալացի և օտար կաթողիկէներու բնական և քաղաքական ազատութիւնները ոտնակոխ կ'ընեն, կը խնդրէ առաքելական օրհնութիւն, և միաբերան կը յայտնէ իր անկեղծ փափաքը Ձեր Սրբութեան սիրտը սփոփելու հաստատուն և հաւատարիմ հնազանդութեամբ:

Նախագահուհի. Քրիսթինէ Ճուստինիանի Բունդինի փոխ-Նախագահուհի. Մարիգուհի սէ Կրէփօիօ Սինետա Ուալլէր:»

Ս. Հայրը հաճեցաւ Իտալացի Տիկիններու Նախագահուհին պատասխանել հետեւեալ կերպով իր Պետական Քարթուղար Կարդինալին միջոցաւ:

«Ս. Հայրը, Պիոս Ժ., մեծապէս գոհ է իզու ազնիւ զգացումներէն Իտալիոյ կաթողիկէ Տիկիններու Միութեան, որուն դուք արժանաւորապէս կը նախագա-

հէք. և հաւատարմութիւնը իր բարեհաճութիւնը և հայ-
րապետ Տոգոթիսի հետ շփոթութեամբ և մարդասի-
րական հաստատութեամբ, կը շնորհէ կաթողիկոսին խնդ-
րուած Առաքելական օրհնութիւնը:

Կարգ. Մերի ճէլ Վալ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Սեպտ. 28/ին, Աթոռանիստ Ս. Աստուածածնի
եկեղեցւոյն մէջ տեղի ունեցաւ քահանայաթաղի ա-
րարողութիւնը Մկրտիչ Վ. Աշխենի, որ Եկեղեցւոյ
Ս. Խորհուրդներով զօրացած կնքեց իր 73ամեայ
կեանքը Սեպտեմբեր 26/ին, Արարողութեան ներկայ
էին Առաք. Թեմին գրեթէ բոլոր վարդապետները և
Պաթա գանուղ և հայ և լատին կրօնաւորական Միա-
բանութիւններու և Կղերանոցներու ներկայացուցիչ-
ները, և բաւական ժողովուրդ: Քահանայաթաղի օրը-
տայն զարարողութիւնները աշխարհի պատկառաւոր-
դու կարգապահութեամբ կատարուեցան որ հոգե-
ցունց տպաւորութիւններ ազդեցին ամենուն:

Ս. Ամեն. Հոգեւոր Տէրը գնահատելով Գեր.
Ստեփան Վ. Համապիտանի բազմաթիւ ար-
ժանիքը, շնորհեց իրեն Գայրազոյն Վարդապետու-
թեան աստիճանը:

Ս. Կ. Պապը Առաքելական Նուիրակ Սարտի
Գերապայծառը, որ Խալիս գացեր էր, վերադար-
ձաւ: Ամեն. Գերեթ. Հոգեւոր Տէրը, ընկերակցու-
թեամբ Արհի. Փոխանորդ Գերապայծառին, բարի
գալուստ մղով ելաւ գնաց Ն. Արհի. Տէրութեան:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Սեպտ. 29/ին Բ. Դրան մէջ գումարուեցաւ հաշ-
տութեան ժողովին վերջին նիստը, և ստորագրուեցաւ
հաշտութեան դաշնագիրը, որով վերջ գտաւ երկու
երկրներու միջեւ 1912 Հոկտեմբեր 17էն սկսած պա-
տերազմական զինուոր. Ստորագրութեան վերջը Ե-
պարքոսը ճառ մը խօսեցաւ շնորհաւորելով ժողովը
ձեռք բերուած յաջողութեան համար: Զօր. Սալօֆ
պատասխանեց՝ Ն. Բարձրութեան յայտնելով իր և իր
ընկերներուն շնորհակալութիւնը և ուրախացութիւն-
ը և մողթեց որ այս հաշտութիւնը երկու երկրնե-
րուն յարաճուն բարգաւաճման պատճառ ըլլայ:

Հաշտութեան դաշնագրին Ա. յօդուածը կը գծէ
սահմանագրութիւնը որ կը սկսի Ռեւոլյուսիոն քաղա-
նէն: Սեւ ծովուն վրայ, կը հետեւի հարաւ-արեւ-
մըտեան ուղղութեան, Թուրքիոյ ձգելով Բլաքս,
Մալթոսի և Լաֆա, Փասփայա, Գանալիճիք: Սահ-
մանագիրը կ'անցնի Թիւրք-Ալթայը, կը հետեւի
Թուրքիւն-Պաշի, Թուրքիոյ արեւմտեան կողմը և Տէր-
վիշթա-Մօկ գիւղին հիւսիսային դին. կը հասնի
Մարիցայի գետի հիւսիս կողմած ծոցին ամենէն
հիւսիսային կէտը, Մուսթաֆա փաշայի արեւելեան

կողմը, և անկէ Չերմէն-Տէրէ: Սահմանագիրը օսմ
հողի մէջ կը ձգէ Թուրք-Թիւրքիոյ ամենէն բարձր կէ-
տը և այդ կէտէն սկսելով, կը հետեւի Արտայի ու
Մարիցայի միջեւ ջուրերու բաժանման գիծին:

Սահմանագիրը 387. Թիւ ըլլաւ Արտա հասնելէ
ետք դէպի արեւելք կը հետեւի Արտայի աջ ափին
և Մարիցայի ձորուղիին մինչեւ այն կէտը ուր գետը
կը բաժնուի երկու ճիւղերու: Գալաթիքի գիւղէն և-
րեքուկէս քիլօմէր դէպի հարաւ. հոնկէ կը հետեւի
այն թեւին ձորուղիին որ կ'անցնի Ֆերէճիքի մօտէն՝
յանգելու համար Եգեական ծովը: Այդ մասին մէջ
Ադ. Սուրի ճահիճները, ինչպէս նաև Քէնէլի կէտը և
Գալաթիքի կէտի լիճերը կը մնան Թուրքիոյ և Թուրքի-
այի ու Տրանս կէտի լիճերը: Պաշկարիոյ:

Յօդ. Բ.— Վերայիշելով լիազօրեցումը կողմէ ներ-
կայ դաշնագրին ստորագրումէն տասն օր ետքը, երկու
պայմանագիր կողմերու բանակները որոնք այս պա-
հաւ կրնան միւս կողմին պատկանող հողեր գրաւած
ըլլալ, պիտի փութան պարպել զանոնք և յաջորդ
տասնըհինգ օրուան ընթացքին՝ զանոնք յանձնել միւս
կողմի իշխանութիւններուն՝ համաձայն կանաններուն
և սովորութիւններուն: Ասկէ դատ, համաձայնու-
թիւն գոյացած է որ երկու պետութիւններն իրենց
բանակները պիտի արձակեն ներկայ դաշնագրին
թուականէն սկսելով մինչեւ երեք շաբաթ:

Յօդ. Գ.— Դիւանագիտական յարաբերութիւննե-
րը, ինչպէս նաև թղթատարական, հեռագրական
և երկաթուղային հաղորդակցութիւնները պիտի
վերականգնուին պայմանագրի բարձր կողմերուն միջեւ ներ-
կայ դաշնագրին ստորագրուելէն անմիջապէս ետքը:

Միւլթիկներու մասին գոյացուած համաձայնու-
թիւնը, որ ներկայ դաշնագրին Բ. Յաւելուածը կը
կազմէ, գործադրելի պիտի ըլլայ Պաշկարիոյ բոլոր հո-
ղամասերուն մէջ:

Յօդ. Դ. Տնտեսական մարտիչին և հիւպատոսա-
կան յարաբերութիւնները պիտի վերականգնուին խառն
Յանձնաժողով մը պիտի կազմուի առեւտրական գաշ-
նագրի մը և հիւպատոսական պայմանագրութեան մը
միասին բանակցելու համար:

Յօդ. Ե.— Պատերազմական գերիները մէկ ամ-
սուան պայմանաժամի մը մէջ պիտի փոխանակուին:

Յօդ. Զ. Երկու պայմանագրի կողմերն ալ ընդ-
հանուր ներքաւ պիտի հրատարակեն:

Յօդ. Է.— Օսմ. Կայսրութեան կողմէ Պաշկարիոյ
արքայական կառավարութեան թողուած երկրորդ-
նեւուն մէջ ծնած բնակիչները, ինչպէս և անոնք որ
հին հաստատութեան են Պաշկարապատակ պիտի ըլ-
լան: Պաշկարապատակ գաղթած և հին ծնած այս
անձերը չորս տարուան պայմանաժամու մը միջոցին,
տեղւոյն վրայ ընտրութիւն ընելու իրաւունքը պիտի
ունենան ի նպատակ օսմ. հպատակութեան, պաշկար
տեղական իշխանութիւններուն եղած պարզ յայտա-
բարութեամբ մը և օսմ. կայս. հիւպատոսարաննե-
րուն մտ եղած արձանագրութեամբ մը: Այժմ ան-

չափահաս տարիքի մէջ գտնուողները ընտրութեան իրենց այս իրաւունքը պիտի կիրարկեն չափահասութեան տարիքին հասնելէն մինչեւ չորս տարի ետքը:

Յօդ. Ը.— Պուլկարիոյ բոլոր հողերուն իւրաքանչիւր կարողացաւ իրեն վայելէն քաղաքային և քաղաքական այն միւլենոյն իրաւունքները զորս կը վայելէն պուլկար ծագում ունեցող հպատակները: Անոնք պիտի վայելէն նաեւ խղճի և կրօնի կիրառական ակադեմիան:

Յօդ. Թ.— Թուրքիոյ մէջ Պուլկար համայնքները պիտի վայելէն միւլենոյն իրաւունքները զորս կը վայելէն ներկայիս Օսմ. կայսրութեան միւլա քրիստոնեայ համայնքները:

Ժ. ԺԱ. ԺԲ. ԺԴ. ԺԵ. յօդաւածները կը տրամադրեն կալուածական ստացուածոց, ինքնէի, առուծախի, ստացման, ինչպէս նաեւ գերեզմանատուններու մասին եղած խնդիրները:

Յօդ. ԺԶ.— Պուլկարիոյ արքայական կառավարութիւնը ստանձնած է օսմ. կայս. կառավարութեան բոլոր իրաւունքները, պարագերն և պարտականութիւններն (կրեւելեան երկաթուղիներու ընկերութեան հանդէպ՝ դիմին այն ոչինչ մասին համար որ իրեն ձգուած է և կը գտնուի Թուրքիոյ հողամասերուն մէջ):

Յօդ. ԺԷ.— Այն բոլոր անհամաձայնութիւններն ու վեճերը, որ կրնան ծագիլ ներկայ դաշնագրին ԺԱ., ԺԲ., ԺԴ. և ԺԶ. յօդուածներուն և Յաւելուած Կին մեկնաբանութեան կամ գործադրութեան մէջ, իրաւարարութեամբ պիտի կարգադրուին Լա Հէյն մէջ, ինչպէս կը արամագրէ ներկայ դաշնագրին Գ. Յաւելուածը կազմող համաձայնագիրը:

Յօդ. ԺԸ.— Սահմանադրութիւնի վերաբերող բոլոր (Յաւելուած Ա.), Միւլթիմիտու վերաբերող համաձայնութիւնը (Յաւելուած Բ.), իրաւարարութեան համաձայնագիրը (Յաւելուած Գ.) երկաթուղիին և Մարիցայի վերաբերող բոլոր (Յաւելուած Դ.), և Ժ. յօդուածին վերաբերող Յայրարարութիւնը (Յաւելուած Ե.) կցուած են ներկայ դաշնագրին, որուն ամբողջական մաս կը կազմեն:

Յօդ. ԺԹ.— Լոնտոնի դաշնագրին՝ Օսմ. կայս. կառավարութեան և Պուլկարիոյ Թագաւորութեան վերաբերեալ արամագրութիւնները պահպանուած են այն չափով որ չեն ջնջուած կամ չեն փոփոխուած վերաբերող պայմաններով:

Յօդ. Ի.— Ներկայ դաշնագիրը գործադրութեան մէջ կը թանկ իր ստորագրուածն անմիջապէս ետքը՝ Վաւերացուած օրինակները պիտի փոխանակուին ադաթէն սկսեալ մինչեւ 15 օր, որուն համար երկու կողմի լիազօրեւոր ստորագրեցին ու կնքեցին զայն:

Ժշտամութեանց սկզբնաւորութիւնէն ի վեր գրուած ստացուածները պիտի վերադարձուին իրենց տէրերուն կամ անոնց ժառանգորդներուն:

Ժ. Դարաւածն ի վեր աւելուած հեռագրերները

լուստես չեն Ալպանիոյ կոցութեան մասին: Այս միայն Սերպիա զօրահանութիւն կը կատարէ, այլ Սօֆիայի զինուորական ջլանակներուն մէջ այնպէս կը նկատուի թէ Սերպիա եթէ պատերազմի բռնուի Ալպանիոյ հետ, Պուլկարիոյ համար դժուար պիտի ըլլայ պահել իր չեզոքութիւնը:

*. Լուր կայ թէ Էստոն փաշա բուսական զօրաւոր ուժ մը կողմած է, և թէ Աւստրուսները գրաւած են Սերպիոյ ձեռքը գտնուած շատ մը վայրեր:

*. Պելկրաս Սեպս. 29.— Մարդոյ Դիւտը կը հրատարակէ հետեւեալ զեկայքը.— «Պաշտօնական տեղեկագիրներ կ'ըսեն թէ Ալպանացի գրաւեցին Լիուսան: Կռիւր սկսաւ ի Լիուսա Գուլէ: Միջոցներ ձեռք առնուեցան եւ օգնական ոյժ դրկուեցաւ, եւ մղելու համար Արմաւազները եւ արգիլելու համար անոնց յաւաքաղացուցին դէպ ի բիրդէն: Օգնական ոյժ զորկուեցաւ նաեւ Օրիթա, կարգ կանոն հաստատելու համար քաղաքային:»

*. Սեպտ. 29ին, երկուշաբթի իրիկուսն դէմ Պոսոյ մէջ յորդահաս անձրեւ մը սկսաւ և յորաճուն աստակութեամբ տեւեց մինչեւ տուաւ օտոմ 40-50 տարիէ ի վեր այսպիսի անձրեւ չէ տեղացեր մայրաքաղաքի մէջ: Ահագին հեղեղներ կազմուեցան և ամէն կողմ ողողելով նիւթական և բարոյական սոսկալի աւերներ գործեցին: Երեքշաբթի առաւել Վոսփորն ու Ոսկեղջիւրը և իրենց ափերը բառմեղի երեւոյթներ առած էին: Հոս՝ ծովուն երեսը աղմոտ այլքներ, խաղաղիկ եղած տուններ, խանութներ, տաղաւարներ, շէնքերու, պատերու կառուի, կահկարասիներ, բանջարեղէններ, տակառներ, հոս՝ ծառեր, թուփեր, ասիականներ, նաւերու բեկորներ, տեղ տեղ մարդու անասուններու գիւղեր, զորոնք լեռներէն իջած առկնկալ կատաղի հոսանքները բերել թափել են խառն ի խառն: Այդին ցամաքին վրայ, ձորերուն բերանները կիսաւեր շուկաներ, պալատներ, համայնափուլ բլուրներ, գեանակործան գարաւոր սօսիներ, շագանակենիներ, աւաղաղից խանութներ, խճակոյտներ և անպատասպար մնացած թշուառներ որ առին անգին կը վազեն խելոյեղ:

Վերին Վոսփորի ամէնէն աւելի փաստուած վայրերն են Թարապիւս, Պէօլիւքտէրէ, Սարքեար և Բուսէլի Գաւաք: Սարքեարի մէջ անհետացեալ են 18 հոգի, Պէօլիւքտէրէի մէջ՝ 3, Բուսէլի Գաւաքի մէջ՝ 1:

Հեղեղները ամենամեծ փաստներ պատճառած են նաեւ Ալի Պէյ և Քեադրաթանէ գիւղերուն մէջ, որոնց բոլոր տուններն ու խանութները ողողած են և երեք չորս փարսաներու կողմին ու ոչխարները և այլն աւեր տարեր են: Արիւհատար Աղայի երկաւոր կոն գործարարը շատ փաստներ է. անոր տաղաւարները և մէջը բնակող հարիւրաւոր գործաւորներ քուեր տարուել են դէպի Էյուսկ և Ոսկեղջիւր: Այս գործարարներուն փաստը 8000 ոսկի կ'ենթադրուի: Կառավարութիւնը ամէն միջոց ձեռք առաւ արկածեալներուն օգնելու:



Ի Տէր հանգեալ Գիր. Մկրտիչ Վ. Աշճեան, բազմաթիւն վաստակաւոր Կաթողիկէ Ս. Եկեղեցւոյ:

Ծնած էր ի Կ. Պոլիս ի 1840, և Հռոմայ Տարած. Հաւատոյ Դպրոցին մէջ մեծ յաջողութեամբ կատարելով քահանայական ուսումնը, ձեռնադրուեցաւ ի 1861 Սեպտ. ի Կ. Պոլիս՝ յայնժամու Նախագահ՝ երջանկայիշատակ Անտոն Պետրոս Թ. Հասուն Պատրիարքէն: Արտակարգ տաղանդով մը օժտուած, անցաւոր աշխարհիս վրայ իր երկար պանդխտութեան օրերը գործածեց՝ անխոնջ ջանիւք, բանիւ և գրով, ի ծառայութիւն մեր Տիրոջ Յիսուսի ճշմարիտ եւ միակ Եկեղեցւոյն, որուն սիրովը յանձնուաւ բոլորով, որդիական անպայման սէր ու մեծարանք կը զաւանէր անոր: Անգնահատելի և անմոռաց յիշատակաց արժանի եղան իր հնարիմաց և արդիւնալից աշխատութիւնները՝ հասարակութեան ամէնէն ճգնաժամային տապաւապներուն ատեն, և վստահ ենք որ արդարադատ, և միանգամայն տկար բնութեանս թերութեանց համար բազմագուլթ Փրկչին նոժարը ծանրացած պիտի հակի անոր և ունդին արդիւնքներովը՝ սրսկուած խաչեցելոյն անգին Արեան մէկ ցօղով:

Այլեւայլ անգամներ, ամբողջովին 29 տարի տեւողութեամբ, վարած է Պատրիարքարանիս Գործակատարութեան բազմակնճիռն պաշտօնը, ամենայն յաջողութեամբ և գովութեամբ. նոյնպէս՝ այլեւայլ ժամանակներ, տարիներով պաշտօնավարած է իրբեւ վերակայու և դասատու Պոլսոյ Կղերանոցին մէջ՝ 5 տարի, Ժողովրդապետ ի Եէնիքէօյ՝ երկու տարի, 8 տարի առաքեալ ի Մարզումն, ի Զօրում և ի Եօզզատ, ուր ինք առաքելութիւն բացած է: Հիմնալի տաղանդով մը օժտուած էր գրելու, զոր միշտ գործածեց ի պաշտպանութիւն Ուղղափառ կրօնքի: Ընթացիկ, ծաղկեալ և կորովի ոճ մը ունէր, որ երբեմն կը բարձրանար մինչեւ գերալսեմ աստիճան: Անգաղար գրած է ջատագովական յօդուածներ ու գրքեր. միեւնոյն դիւրութեամբ կը գրէր զաղղիներէն լեզուաւ: Մեծ գնահատումի արժանացաւ գիտուններէն իր գեղեցիկ երկասիրութեամբը՝ *honorabilis*:

Իրտէր՝ բաց ի մայրենի և կառավարական լեզուէ, նաեւ Լատ., Իտալ., Գաղղ. և Յունարէն: Ունէր Օսմ. Գաղղ. և Երուսաղէմի պատուանշաններ:

Եռանդուն էր ընաւորութեամբ, բայց միանգամայն քաղցր և կարի բարեւսիրտ: Անպայման հպատակութիւն ու մեծարանք ունէր իր եկեղեցական Պետերուն հրամանաց:

Վերջին հիւանդութեանը պահուն կատարելապէս համակերպեցաւ Աստուծոյ Սուրբ Կամաց եւ իր կեանքը յօժարութեամբ զոհեց իր Արարչին ինչպէս թեմա կաղղորուեցաւ Եկեղեցւոյ Ս. Առնիւրդներովը՝ ի պատրաստութիւն մեծ ճանապարհին, որ, կը յուսանք յանսահման գթութենէ Ս. Արտիս Յիսուսի, առաջնորդեց իր հոգին անվախճան ի կեանս:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Դեպքեր եւ սկզբունքներ	625
Յիսուս Քրիստոս	629
Եկեղեցական-գիսական խնդիրներ.	631
Պիւ միւրալսա	633
Եօթնակ Քրիստոնէի	635
Սուրբ Սիրս Յիսուսի	636
Ամասիայէն	636
Տեղեկագրական	637

ԱՐՏՕՆԱՏԷՐ



ՏՆՕՐԷՆ-ԽՄ ԲԱԳՐԱՊԵՏ

ՅՈՎԸ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ԳԷՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Գ. Արճազունց Զաքարթերի, Քեթ. Պարամ փողոս Եկ. Կ. Պոլիս

Երանելի Տէր Կոմիտաս Քահանային վարքը, առանձին հրատարակուեցաւ ընտիր թուղթի վրայ, մաքուր տպագրութեամբ և երեք պատմական պատկերներով:

Փափաքելի է որ ամէն Հայ Կաթողիկէ ունենայ այս գեղեցիկ մատենիկը, որուն միակ նպատակն է ծանօթացնել ամէնուն Երանելի Նահատակին գերազանց բարեմասնութիւնները, և, անոր ջերմեռանդութիւնը ծաւալելով, հրաւիրել ամէնուն վրայ անոր բարեխօսութեան անզուգական արդիւնքները:

Գին 5 դանեկան, էջ 144 աւուր քրքակագր

Գրքոյկիս երեք պատկերները, 1. Տէր Կոմիտաս քահանայական զգեստով և իր շիրիմը, 2. Տէր Կոմիտաս դատաւորին առջև, 3. Դիտատումը, առանձին ալ կը ծախուին. մեծաքանակ գէնողներու, գոհացուցիչ գեղ:

ԿԸ ԾԱԽՈՒԻ «Տարրական Սկզբունք Քրիստոնէական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Գին, աւուր թղթակազմը 2 դհկն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Թուրքիոյ համար, տարեկան՝ 40 դրկ. արծ. վեցամսեա՝ 20.—
մէկ թիւ՝ 1 դրկ.:— Աւստրալիանի սար. ճր. 10. վեցամս. 5.—Վարձուիմ կանխիկ են:
ՀԱՍՏԷ.— Կաթողիկէ Արժագանգ, Բերա, 5 Պայրամ փողոց, 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ.— 1.—Արժագանգ կը նրաստակուի Եւրոպ. օրեր: 2.— Խմբագրութիւնս պատշա-
տեալ չէ անպատշաճ, իսկ փոխութեամբ նրաստակել իրեն զրկեամբ եւ է յօդուած: 3.—Կեղծանունով զրկուած
յօդուածներու հեղինակը կը պատժուի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրատեղին: 4.— Ձեռագիրներ եւ չեն
դարձուի: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած թղթի վրայ լինի մէկ կողմը միայն: 6.— Ծանուց-
մանց համար մասնաւոր պայմանագրութիւն կը կատարուի: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է ամենա-
փոքր երկու դանկեանի նամակագրութեամբ ի միասին զրկել:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արժագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայնի նոյն եւ ի վիճակի է
որ եւ իցէ տպագրական գործոց համար: Կը սպուին ամեն տեսակ ծանուցումներ, զիբեր, տեսներ, հրաւիրագիրներ,
բարդեր, բարդ-տեսներ, մանագրներ, եւն., եւն.: Գրները ամենայն կերպով աման են: Գեղեցկագիտական նա-
շակի եւ տպագրական մատրութեան կողմանէ յանձնարարները անհատական զոն պիտի մնան: